ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 01

Ք. Երևան **« 27 » Դեկտեմբերի 2021թ.**

«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ ի դեմս նրա տնօրեն՝ **Վ. Պետրոսյանի ,** որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից, և **«Մանիլ» ՍՊԸ** ի դեմս նրա տնօրեն՝ **Մ. Մայխասյանի** այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 «Կատարողը» պարտավորվում է «Պատվիրատուի» հանձնարարությամբ կատարել՝ **Ծովակալ Իսակովի 50/12 հասցեի վերելակի էլ. շարժիչի ընթացիկ վերանորոգման** (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ «Պատվիրատու»-ն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար:
1.2 Ծառայություններն ընդունված են համարվում կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:
1.3 Ծառայությունները մատուցվում են «Կատարող» -ի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.Պայմանագրի գինը, վճարման պայմանները

2.1 Սույն պայմանագրով ծառայությունների դիմաց վարձատրումը կազմում է՝ **179371 (մեկ հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ:**
2.2 Ծառայությունների գինը կայուն է և «Կատարող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Պատվիրատու»-ն նվազեցնելու այդ գինը:
2.3 «Պատվիրատու»-ն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները «Կատարող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1«Պատվիրատու»-ն իրավունք ունի՝
3.1.1 Ցանկացաց ժամանակ ստուգել «Կատարող»-ի մատուցած Ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
3.1.2 «Կատարող»-ի կողմից սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունների մատուցման նոր ժամկետ և պահանջել «Կատարող»-ից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տույժերը.
3.1.3 Մինչև Ծառայությունների արդյունքները իրեն հանձնելը ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ «Կատարող»-ին վճարելով մինչև պայմանգրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված ծախսերին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնելով այդ մասին «Կատարող»-ին.
3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե
ա)«Կատարող»-ը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունների մատուցումը իրականացվում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.
բ)«Կատարող»-ի կողմից մատուցված Ծառայությունների արդյունքները չեն համապատասխանում սույն պայմանագրի պահանջներին:

3.2 «Պատվիրատու»-ն պարտավոր է՝
3.2.1 Սույն պայմանագրով նախատեսված կարգով «Կատարող»-ից ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները:
3.2.2 Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված գումարը:

3.3 «Կատարող»-ն իրավունք ունի՝
3.3.1 «Պատվիրատու»-ից պահանջել վճարելու սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:
3.3.2 Մինչև Ծառայությունները «Պատվիրատու»-ին հանձնելը, «Պատվիրատու»-ի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում «Պատվիրատու»-ից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումը ստանալու պահը կատարված ծախսերի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված դեպքերի:
3.3.3 Մինչև Ծառայությունները «Պատվիրատու»-ին մատուցելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ «Պատվիրատու»-ին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները առնվազն մեկ աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնելով «Պատվիրատու»-ին:
3.4 «Կատարող»-ը պարտավոր է՝

3.4.1 Կատարել Ծառայությունների մատուցման վերաբերյալ «Պատվիրատու»-ի տված ցուցումները, եթե դրանք չի հակասում սույն պայմանագրի պայմաններին:
3.4.2 Սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետը խախտելու և «Պատվիրատու»-ի կողմից Ծառայությունների մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում ապահովել Ծառայությունների մատուցումը սահմանված ժամկետում և «Պատվիրատու»-ի պահանջի առկայության դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարել սույն պայմանագրի 4.2 կետում նախատեսված տույժ:

3.4.3 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել «Պատվիրատու»-ին պատճառված վնասները:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1«Կատարող»-ը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սույն պայմանագրով սահմանված ժամկետների պահպանման համար:
4.2 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար «Պատվիրատու»-ն իրավունք ունի «Կատարող»-ից գանձել տուգանք՝ սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0.05 տոկոսի չափով, իսկ Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու համար յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել տույժ՝ սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0.05 տոկոսի չափով:
4.3 «Պատվիրատու»-ի կողմից սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար «Պատվիրատու»-ի նկատմամբ «Կատարող»-ը իրավունք ունի յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:
4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.5 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

5.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների ողջ ծավալով պատշաճ կատարումը:
6.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
6.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
6.4 Սույն պայմանագիրն կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի №1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
6.5 Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները ենթական են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
«ՀԱՅԱՏՈՄ » ՓԲԸ	***«Մանիլ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան Ծով. Իսակովի 50/12	Հասցե՝ Բաբաջանյան 1/1
ՀՎՀՀ՝ 01804548	ՀՎՀՀ՝ 01845706
«ՀԲԲ»	«ՀԲԲ» Սեբաստիա մ/ճ
Հ/Հ 11500682358300	Հ/Հ 11500593206200
Տնօրեն՝ Վ. Պետրոսյան	Տնօրեն՝ Մ. Մալխասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծովակալ Իսակովի 50/12 հասցեի վերելակի

էլ. շարժիչի վերանորոգման

(ՀՀ դրամ)

N	Նյութեր	Չ/մ	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	Պղնձյա էմալապատ հաղորդալար	կգ	10	8000	80000
2	Կարտոն /պրեշպան/	Կգ	0,5	3000	1500
3	Էլեկտրոնիտ	Կգ	0,5	1000	500
4	Բազմագալար պղնձյա հաղորդալար	մ	3	200	600
5	Փայտիկներ	մ	8	100	800
6	Սինտոէլեկտրոկարտոն	կգ	0,6	2000	1200
7	Մեկուսիչ խողովակ	մ	8	100	800
8	Թել /տիսմա/	մ	10	40	400
9	Կարտոն /պլյոնկա/	մ	1	1500	1500
10	Էլ. շարժիչի առանցքակալ	հատ	2	5000	10000
11	Էլ. շարժիչի կիսակցորդիչ	հատ	1	30000	30000
	Ընդամենը				127300
	Աշխատավարձ				28000
	Ընդամենը				155300
	Շահույթ 10%				15530
	Ընդամենը				170830
	Շրջ.հարկ 5 %				8541
	Ընդամենը				179371

Կատարող՝

Մ. Մալխասյան ----------

Դատավիրատու

Վ.Պետրոսյան----------